«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1__

Ք.Երևան **26.08.2019թ.**

2019թ. օգոստոսի 26-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2019-2020 ուստարվա անդրանիկ նիստը տնօրեն Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչները և հիմնական դասախոսական կազմը, հրավիրված՝ ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանը, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Մանկավարժական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատման մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

2. 2019-2020 ուստարվա ուսումնական տարվա դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքների մասին:

(Զեկուցող, Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին:

(Զեկուցող, Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

4.2019-2020 ուստարվա ուսումնական պլանների քննարկում:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

5. 2019-2020 ուստարվա հաստիքացուցակի քննարկում:

(Զեկուցող, ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

6. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ներքին իրավանորմատիվային փաստաթղթերի (վերանայված և նոր մշակված) փաթեթին հավանություն տալու մասին:

(Զեկուցող, ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալայն):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը Մանկավարժական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակում Տնօրինական խորհրդի որոշմամբ ձևավորված քոլեջի ներքին իրավանորմատիվային փաստաթղթերի վերանայման և մշակման

աշխատանքային խումբը մշակել է ստորաբաժանումների համար պանավորման նոր ձևաչափ (հնգամյա), որի գործողությունները համընկում են գործող 2019-2024թթ. ՌԶԾ-ի նպատակների և խնդիրների հետ: Աշխատանքային պլանի նոր ձևաչփը ներկայացնելուց հետո նա առաջարկեց քննարկել և ներկայացնել Տնօրենին հաստատելու համար:

Շարունակելով ելույթը, Լ.Հարությունյանը ներկայացրեց նաև Մանկավարժական խորհրդի նոր կազմը և առաջարկեց նախ ընտրել քարտուղար, որից հետո քննարկել կազմը և հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը և ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը առաջարկեցին մանկավարժական խորհրդի քարտուղարի պաշտոնում Լ.Հարությունյանի թեկնածությունը:

Այլ թեկնածուներ չառաջադրվեց:

Միաձայն բաց քվերակությամբ մանկավարժական խորհրդի քարտուղար ընտրեցին Լ.Հարությունյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Մանկավարժական խորհրդի քարտուղարի քվերակության արդյունքները՝ Լ.Հարությունյանին ընտրել խորհրդի քարտուղար:
2. Հաստատել Մանկավարժական խորհրդի աշխատանքային հնգամյա պլանի նախագիծը:
3. Հաստատել մանկավարժական խորհրդի նոր կազմը:
4. Հանձնարարել խորհրդի քարտուղար Լ.Հարությունյանին պլանը նիստի ավարտից անմիջապես հետո ներկայցնել Տնօրենի վավերացմանը և տրամադրել խորհրդի ամնդամներին:

2. **Լսեցին՝** Քոլեջի ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի և դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը նախ ներկայացրեց 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի առաջնային հիմնախնդիրները և առաջարկեց քոլեջում մեծ ուշադրություն դարձնել սովորողների կրթական մակարդակի բարելավմանը, կիրառել մանկավարժական և անձնային մոտեցումներ: Հետևել ուսման առաջադիմությանը և կրթության որակի ապահովմանը, դրսեվորելով մանկավարժական վարպետություն: Առաջարկեց հաճախակի կազմակերպել դասալսումներ, ուսուցողական բաց դասեր և այլ միջոցառումներ: Նշեց նաև, որ շենքային պայմանների և ուսումնական միջավայրի ուղղությամբ տնօրինության կողմից կատարվել են մեծ աշխատանքներ, մասնավորապես՝ վերանորոգվել են 2 և ստեղծվել ևս 2 նոր ուսումնական լսարաններ:

Ամփոփելով ելույթը Ն.Եգորյանը խոսքը փոխանցեց ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- **Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝** Ն.Սահակյանն իր ելույթում ներկայացրեց 2019-2020 ուստարվա դիմորդների ընդունելության պլանը՝ նշելով, որ բավականին մեծ է եղել դիմորդների քանակը, կատարվել է ընդունելության պլանը՝ համաձայն ընդունելության կանոնակարգի՝ 20 ուսանող «Դեղագործություն» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 20 ուսանող «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 12 ուսանող «Քույրական գործ» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 12 ուսանող «Դեղագործություն» մասնագիտությամբ միջնակարգ ընդհանուր կրթություն, (բոլորը վճարովի): Ցավոք եղել են նաև թափուր տեղեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Վերոհիշյալ հիմնախնդիրները ընդունել ի գիտություն և ակտիվացնել ուսումնադաստիարակչական աշխատանքները քոլեջում:
2. 2019-2020 ուստարվա դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքները ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա ամբիոնների կողմից իրականացված նախապատրաստական աշխատանքները, որի արդյունքում.

- Ամբիոններում քննարկվել են ըստ մասնագիտությունների բոլոր ուսումնական պլանները համաձայն ՊԿՉ-ների և ներկայացվել են 4 մասնագիտությունների՝ միջնակարգ և հիմնական ընդհնուր կրթության հիմքերով ուսումնական պլանների նախագծերը:
- Ամբիոններում ուսումնական պլաններով նախատեսված դասաժամերը քննարկվել և հաշվարկվել են:
- Ամբիոններում քննարկվել և հաստատվել են ժամաբաշխման հիման վրա դասախոս-ների տարիֆիկացիայի նախագիծը:
- Ուսումնական մասի հետ քննարկվել և հստակեցվել է դասացուցակները:
- Բոլոր ուսումնական խմբերի համար նշանակվել են դասղեկներ:
- Վերանայվել են ամբիոնների կազմերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը և Լ.Հարությունյանը: Նրանք հավանություն հայտնեցին կատարված նախապատրաստական աշխատանքներին և համարեցին բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նախապատրաստական աշխատանքները ընդունել ի գիտություն և համարել բավարար:
2. Հանձարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հարցը ներկայացնել Տնօրինական խորհուրդ:

4. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարչ Լ.Հարությունյանի ելույթը 2019-2020 ուստարվա ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնկան պլանների նախագծերի, քննարկման վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր ելույթում ներկայացրեց ամբիոնների հետ համատեղ վերանայված ուսումնական պլանների նախագծերը, որոնք վերանայվել և լրամշակվել են 2019-2020 ուստարվա նախապատրաստական աշխատաքների ընթացքում: Ամփոփելով ելույթը, նա առաջարկեց քննարկել և երաշխավորվել այն ներկայացնելու Քոլեջի Տնօրինական խորհուրդ (ուսումնական պլանների նախագծերը կցվում են):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2019-2020 ուստարվա ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերը և ներկայացնել Տնօրինական խորհուրդ:
2. Հանձարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին Տնօրինական խորհրդի կողմից հաստատվելուց հետո, ուսումնական պլաններ տրամադրել մասնագիտական ամբիոններին:

5. **Լսեցին՝** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը 2019-2020 ուստարվա դասախոսական կազմի հաստիքացուցակի քննարկման վերաբերյալ:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա դասախոսական տարիֆիկցիայի հաստիքացուցակի նախագիծը: Նա նշեց, որ այս ուստարում դասախոսական կազմում լուրջ փոփոխություններ չեն եղել: Ընդամենը երեք դասխոսներ իրենց դիմումի համաձայն ազատվել են աշխատանքից, նրանց փոխարեն ընդունել ենք համապատասխան դասախոսներ: Ներկայացված հաստիքացուցակի նախագիծը լիովին համապատասխանում է ՀՀ ԿԳ նախարարարության կողմից ներկայացված միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակին: Եզրափակելով ելույթը, Ա.Գյոզալյանը ավելացրեց նաև, որ պլանավորվում է հաջորդ ուստարվաից ներդնել քոլեջի ընդհանուր հաստիքացուցակի նոր ձևաչափ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2019-2020 ուստարվա հաստիքացուցակը և ներկայացնել Տնօրինական խորհուրդ:
2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին նոր հաստատված հաստիքացուցակի մասին տեղեկացնել անձնակազմին:

6. **Լսեցին՝** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկահումանիտար քոլեջի ներքին իրավանորմատիվային փաստաթղթերի (վերանայված և նոր մշակված) փաթեթին հավանություն տալու վերաբերյալ:

Ա.Գյոզալյանը ներկայացրերց վերանայված փաստաթղթերի փաթեթը, այդ թվում նաև Քոլեջի 2019-2024թթ. մշակված նոր ՌԶԾ-ի նախագիծը: Ներկայացված փաստաթղթերը նախորդ ուստարվա ընթացքում ամբիոնների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա ամբողջովին լրամշակվել են, հաշվի են առնվել բոլոր առաջարկները և դիտարկումները: Ամփոփելով ելույթը, նա ներկայացրեց նոր մշակված փաստաթղթերը և նշեց, որ աշխատանքային խումբը իրականացրել է շատ լուրջ, ծավալուն և արդյունավետ աշխատանք, չմոռացավ նշել նաև ուսանողների կողմից կատարված աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Տնօրեն Ի.Վարդանյանը և տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը, նրանք հավանություն հայտնեցին և առաջարկեցին երաշխավորել ներկայացված փաստաթղթերը 2 փաթեթով, որտեղ՝ առաջինում կլինեն վերանայված փաստաթղթերը, իսկ երկրորդում՝ նոր մշակված փաստաթղթերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել Քոլեջի 2019-2024թթ. վերանայված ՌԶԾ-ի նախագիծը և ներկայացնել Քոլեջի Տնօրինական խորհուրդ վերջնական եզրակացության համար:
2. Երաշխավորել 2 փաթեթները ամբողջությամբ և ներկայացնել Տնօրինական խորհուրդ:
3. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանին փաստաթղթերը հաստատվելուց հետո տրամադրել ստորաբաժանումներին:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Ք.Երևան **17.01.2020թ.**

2020թ. հունվարի 17-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2019-2020 ուստարվա հերթական նիստը տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի նախագահությամբ (Ի.Վարդանյանը գտնվում էր հերթական արձակուրդում): Նիստին ներկա էին խորհրդի քարտուղար Լ.Հարությունյանը, անդամներ՝ ամբիոնի վարիչները և հիմնական դասախոսական կազմը, ինչպես նաև ուսանողական խորհրդից մեկ ուսանող:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի մանկավարժական խորհրդի նախագահող Ն.Եգորյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը, որն էլ քվեարկությամբ միաձայն հաստատվեց:

1. 2019-2020 ուստարվա աշնանային կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

(Զեկուցող, Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքների և կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

3.«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

(Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ն.Եգորյանը ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին տեղեկացրեց 2019-2020 ուստարվա աշնանային կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, մասնավորապես՝ նշանակվել և անցկացվել են քննություններ ընդհանուր և հատուկ մասնագիտկան մոդուլներից և առարկաներից, բոլոր քննությունները անցկացել են ըստ վարման կարգի,կազմակերպվել են միջմոդուլային և միջառարկայական համալիր քննություններ, ուսանողների կողմից գիտելիքների ստուգման և գնահատման վերաբերյալ բողոքարկումներ չեն արձնագրվել:

Եզրափակելով ելույթը Ն.Եգորյանը ներկայացրեց նաև 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատնքնրի ընթացքը և ընթացիկ վիճակը, որից հետո նշեց, որ այս պահին պատրաստ է դասացուցակը և

ժամանակացույցը: Ամբիոնի նիստերը ըստ պլանավորված ժամանակահատվածով կկայանան, որտեղ պետք է քննարկվեն դասախոսների թեմատիկ պլանները, որից հետո ուսումնական մասի վարիչը կպատրաստի 2-րդ կիսամյակի դասամատյանները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. Հանձնարարել ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին, կազմակերպել վերահսկողություն և արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել քոլեջի տնօրենին:

2. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքների և կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների վերաբերյալ:

Լ.Հարությունյանի իր ելույթում ներկայացրեց ամբիոնների կողմից իրականացված նպատակային և ծավալուն աշխատանքները: Ուսանող ամբիոն կապը տարեց տարի ամրապնդվում է, քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքները իրականացվում են միասնական ուժերով, որում ակտիվ մասնակցություն ունեն ուսանողական խորհուրդը և ամբիոնները: Քոլեջում ցանկացած առաջացած խնդիր, եթե եղել են այդպիսին, արագ և օպերատիվ կերպով ստացել են սպառիչ լուծումներ: Նա նշեց, որ հիմնականում առաջացած խնդիրները, դա՝ ուսանողների դասերից ուշացումներն են եղել, այդ հարցը աստիճանաբար լուծվում է: Հիմնականում քոլեջում տիրում է բարիդրացիական մթնոլորտ, ոչ մի լուրջ խնդիրներ, կապված ուսանողների վարքագծի հետ կապված չեն արձանագրվել:

Լ.Հարությունյանը տնօրենի տեղակալ Ն.Եգորյանից թույլտվություն խնդրելով ներկայացրեց նաև Տնօրինական խորհրդի որոշումը, այն մասին, որ անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռնարկել ուսման վարձերի հավաքագրման գործում, քանի որ այդ հարցը շատ կարևոր է քոլեջի հետագա արդյունավետ գործունեության համար: Այդ իսկ պատճառով առաջարկեց մասնագիտական ամբիոնների վարիչներին կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ և ուսանողական խորհրդի անմիջական օգնությամբ լուծում տալ այդ հարցին:

Շարունակելով ելույթը, տեղեկացրեց, որ քոլեջում ակտիվ իրականացվում է որակի ապահովման գործընթացները, մասնավորապես՝

- Կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ, տրվել անհրաժեշտ խորհրդտվություններ ԱԲՀ-ի ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա.Գ.Գյոզալյանի կողմից:
- Մշակվել է Քոլեջի ՈՆԱ ձեռնարկի նախագիծը, որը ներկայացրեց մանկավարժական խորհրդի քննարկմանը:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների մեկնարկով պայմանավորված նախատեսվում է ձևավորվել աշխատանքային խմբեր:
- Մշակվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանք-

ների պլան-ժամանակացույցի նախագիծը, որն էլ ներկայացրեց խորհրդի քննարկմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Դասախոսներ՝ Ս.Կեսոյանը և Լ.Բաբայանը իրենց ելույթներում նշեցին, որ անհրաժեշտ է խմբերում ներգրավել նաև ուսանողներին և սկսել աշխատել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափի վրա:
- Ուսանողական խորհրդի ներկայացուցիչը ուսանողական խորհրդի անունից վստահեցրեց, որ մոտ օրերս կկազմակերպեն հանդիպումներ բոլոր կուրսերի ավագների հետ և այդ հարցի շուրջ կներկայացվեն համապատասխան առաջարկություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձարարել ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանին ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների իրականացման պլան-ժամանակացույցի նախագիծի վերջնական տարբերակը քննարկումից հետո ներկայացնել Տնօրինական խորհուրդ:
3. Հանձնարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին և ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանին կազմակերպել համատեղ հանդիպումներ ուսանողների հետ:

3. **Լսեցին** Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվակնների ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը բովանդակային ելույթում ներկայացրեց Քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման գործող ծրագրի ընթացքը, նշելով, որ դեռ ընդամենը վեց ամիս է ինչ գործարկվում է: Առայժմ ծրագրի գործողությունները իրականացվում են սահուն և առանց որևէ խոչընդոտների:

Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը նշեց, որ նախատեսվում է ներկայացնել տարեկան կատարողական զեկույց, համաձայն պլան-ժամանակացույցի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Մանկավարժական խորհրդի անդամներին ակտիվ մասնակցել գործող ՌԶԾ-ի գործողությունների իրականացմանը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ք.Երևան **23.03.2020թ**

2020թ. մարտի 23-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի արտահերթ առցանց նիստը տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի քարտուղար Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչներիը և հիմնական դասախոսական կազմը, ինչպես նաև ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը՝

1. ՀՀ Կառավարության «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 16.03.2020թ-ի N 298-Ն որոշման վերաբերյալ հաղորդում:

(Զեկուցող՝ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. Գործող ուսումնական ծրագրերի վերանայման, դասաժամերի կատարողականի ներկայացման նոր ձևաթղթի մասին:

(Զեկուցող, Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ Կառավարության «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 16.03.2020թ-ի N 298-Ն որոշման վերաբերյալ տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը:

Ն.Եգորյանը նախ ներկայացրեց ՀՀ կառավարությունը 16.03.2020թ-ի N 298-Ն որոշումը, որից հետո ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժ.Անդրեասյանի 18.03.2020թ. №02/08.1/6735-20 գրությունը, համաձայն որի, այլընտրանքային ուսուցման մեթոդներից այս իրավիճակում միակ հնարավոր մեթոդը դարձել է հեռավար ուսուցումը: Ուստի, հաշվի առնելով երկրում ստեղծված իրավիճակը և կարևորելով ուսանողների՝ կրթություն ստանալու անընդհատությունը, մեր Քոլեջում նույնպես կազմակերպվում է հեռավար ուսուցում: Հաշվի առնելով այս ամենը, պետք է հնարավորության սահմաններում այս

խնդրին շատ արագ լուծում տալ և ապահովել յուրաքանչյուր ուսանողի կրթության շարունակականությունն այլընտրանքային մոտեցումներով:

Շարունակելով ելույթը, Ն.Եգորյանը ներկայացրեց նաև 20.03.2020թ. Տնօրինական խորհրդի նիստ հերթական որոշումը և անհրաժեշտ է ցուցաբերել ճկունություն, անհրաժեշտ ընթացակարգերի մշակման առաջարկությունների ներկայացում, իրականացնել կազմակերպչական և վերահսկողական գործառույթներ: Քոլեջի տնօրինությունը պատրաստակամ է տրամադրել համապատասխան խորհրդատվություն և անհրաժեշտ աջակցություն, թե' դասախոսներին, և թե' ուսանողներին: Տնօրենի առաջարկով այն դասախոսները, ովքեր տանը չունեն բավարար պայմաններ, կարող են իրենց հեռավար դասերը իրականացնել Քոլեջից: Ելույթի վերջում Ն.Եգորյանը առաջարկեց ուսումնական մասին սեղմ ժամետներում ուսումնասիրել տեղական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների փորձը և անհրաժետության դեպքում մշակել համապատասխան փաստաթղթեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող՝ Ա.Գալստյանը նշեց, որ ուսանողական խորհուրդը պատրաստ է իրակա-նացնելու այն բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները, որոնք կտրվեն քոլեջի ղեկավարության կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին մշակել և ներկայացնել ըստ կուրսերի օպերատիվ դասացուցակ:
2. Հանձնարարել ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին մանկավարժական խորհրդի նիստի արդյունքները ներկայացնել Տնօրինական խորհուրդ:
3. Հաջորդ նիստը հրավիրել մեկ շաբաթ անց և ներկայացնել իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղկատվություն:

2. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը գործող ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի վերանայման, դասաժամերի կատարողականի ներկայացման նոր ձևաթղթի վերաբերյալ:

Տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը նախ ներկայացրեց ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ Ժ.Ադրեասյանի գրությունը, նշելով այն, որ մեկ շաբաթվա ընթացքում պետք է

ներկայացնել Քոլեջի կողմից կազմակերպվող հեռավար ուսումնական գործընթացի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն: Հաշվի առնելով այդ հանգամանքը, առաջարկեց ամբիոնի վարիչներին սեղմ (4 օր) ժամկետում, ուսումնական մաս նեկայացնել համապատասխան առաջարկներ: Ինչպես նաև միջոցներ ձեռնարկել առցանց կազմակերպվող դասերին ապահովել ուսանողների ակտիվ մասնացությունը:

Ամփոփելով ելույթը, Ն.եգորյանն առաջարկեց քննարկել և ներկայացնել առաջարկություններ, լինելու դեպքում դասախոսների կողմից դասախոսությունների կատարողականի նոր ձևաթղթի նախագծի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ առաջարկվող ձևաչափը շատ մատչելի և հասկանալի է որպես կատարողական ձևաթուղթ:
- Դասախոսներ Հ.Քոչարյանը, Ա.Մելքոնյանը և Ա.Գրիգորյանը առաջարկեցին կատարողականի ձևաչափը հաստատել, քանի որ այն պարզ է և հասկանալի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել դասաժամերի կատարողականի ներկայացման նոր ձևաթուղթը:
2. Հանձնարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին գալիք մանկավարժական խորհրդում ներկայացնել դասաժամերի կատարողականի ներկայացման նոր ձևաթուղթը և իրականացնել վերահսկողություն:
3. Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին. յուրաքանչյուր ուրբաթ տնօրենին զեկուցել իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Ք.Երևան **27.03.2020թ.**

2020թ. մարտի 27-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի արտահերթ առցանց նիստը տնօրեն Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի քարտուղար Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչները, հիմնական դասախոսական կազմից՝ 5 դասախոս, ինչպես նաև ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը՝

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի ընթացիկ վիճակի մասին:
(Զեկուցող, Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
2. «Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի նախագծի ներկայացման մասին:
(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում ուսումնական գործընթացի կազմակերպչական աշխատանքների և ընթացիկ վիճակի վերաբերյալ ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը:

Տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը ներկայացրեց Քոլեջում մեկ շաբաթյա հեռավար ուսուցման ընթացիկ վիճակը: Նա նշեց, որ ի պատիվ մեր դասախոսների առանց որևէ դժվարության, բոլոր առարկաներից անխափան և առանց խնդիրների իրականացվում են հեռավար ուսուցումը: Ն.Եգորյանն իր ելույթում ամփոփ ներկայացրեց կատարված կազմակերպչական աշխատանքները, այդ թվում.

1. Ուսումնական մասի կողմից կազմակերպվել են առցանց հանդիպումներ՝ ուսանողների, ամբիոնի վարիչների և դասախոսների հետ:
2. Հստակեցվել են առաջիկա շաբաթների աշխատանքները:
3. Ըստ կուրսերի և խմբերի ձևավորված ֆեյսբուքյան խմբերը արդյունավետ աշխատում են:

4. Ուսումնական մասի կողմից վերանայվել, կարգավորվել և հստակեցվել է դասացուցակը:

Ինչ վերաբերում է 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին, ապա այդ հարցը առաջարկեց քննարկել հաջորդ նիստում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և առնվազն մեկ շաբաթ անց հրավիրել նոր նիստ:
2. Արձանագրել, որ Քոլեջում առցանց եղանակով ուսումնական գործընթացն իրականացվում է անխափան և արդյունավետ:
3. Հաջորդ նիստին ներկայացնել առցանց ուսուցման կազմակերպման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ:

2. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը «Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի նախագծի վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում ներակայցրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ Ժ.Անդրեասյանի 19.05.2020թ. №02/08.1/11456-20 և դրան նախորդող գրությունները, որի արդյունքում մշակվել է «Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի նախագիծը: Այս փաստաթղթում ներկայացված է ինչպես կազմակերպել ուսումնական գործընթացը: Փաստաթղթի հետ կապված մանկավարժական խորհրդի կողմից գրավոր առաջարկներ չեն ներկայացվել, եղել են միայն բանավոր և գործնական քննարկումներ: Արդյունքում տեղում կատարվել են անհրաժեշտ լրացումներ, լրամշակումներ և գրախոսում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը, ամբիոնի վարիչներ Լ.Բաբայանը և Ա.Մարգարյանը իրենց ելույթներում համակարծիք էին, այն մասին, որ նախագիծը իրոք պատրաստ է ներկայացնելու Տնօրինական խորհուրդ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել «Քոլեջում հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի նախագիծ և ներկայացնել Տնօրինական խորհուրդ:
2. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակը կազմակերպել և անցկացնել՝ առաջ-նորդվելով «Քոլեջում հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգով:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

Ք.Երևան **15.04.2020թ.**

2020թ. ապրիլի 15-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի արտահերթ առցանց նիստը տնօրեն՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչներիը, հիմնական դասախոսական կազմից՝ 7 դասախոս, ինչպես նաև ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը.

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի վիճակի մասին:

(Զեկուցող՝ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ Քոլեջի ուսանողների շրջանում անցկացված առցանց հարցումների արդյունքների ամփոփում:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում տեղեկացրեց, որ արտակարգ իրավիճակի պայմաններում բոլոր կուրսերում սոցիալական ցանցերում (Messenger, Istagram, Viber, Skype, Facebook, Telegram) ձևավորված ուսանողական խմբերը շատ արդյունավետ պահպանում են դասախոսի հետ կապը և ցանկացած պահին կարողանում են հաղորդակցվել իրենց դասախոսների հետ: Հեռավար ուսուցման գործընթացի ապահովման նպատակով քոլեջի դասախոսների կողմից օգտագործվում են

հիմնականում ZOOM, Googl Classroom, Macrosoft հարթակները: Դասախոսների կողմից լայնորեն օգտագործվել են նաև էլեկտրոնային փոստային ծրագրերը և հեռավար կապը ապահովող տարբեր հավելվածները:

Գարնանային կիսամյակում նախատեսված առաջին միջանկյալ ստուգումները հիմնականում անցկացվել են՝ բանավոր և գրավոր: Ամբողջ ուսումնական գործընթացը հեռավար վերահսկվել է Ուսումնական մասի կողմից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Ամբիոնի վարիչներ՝ Ս.Կեսոյանը և Լ.Բաբայանը իրենց ելույթում նշեցին, որ ամբողջ դասախոսական կազմը շատ լրջորեն և պատասխանատվությամբ է վերաբերվում քոլեջի առջև դրված խնդիրների լուծմանը: Նրանք հավելեցին, որ ընդհանուր առմամբ ամբիոնի դասախոսների հետ կապը պահպանվում է, պարբերաբար քննարկում են առաջացած խնդիրները:
- Ուսանողական խորհրդի ներկայացուցիչ՝ Ա.Գալստյանը իր ելույթում ներկայացրեց Ուսանողական խորհրդի 14.04.2020թ. նիստում քննարկված և որոշում ընդունած առաջարկը: Ելույթի վերջում, Ա.Գալստյանը հաստատեց ուսանողական խորհրդի պատրաստակամությունը աջակցել և նպաստել քոլեջում հեռավար եղանակով ուսումնական գործընթացի իրականացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումներն ընդունել ի գիտություն:
2. Արձանագրել, որ ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացը ընթանում է բավարար:
3. Հանձնարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին Ուսխորհրդի հետ համատեղ իրականացնել ուսումնական գործընթացի վերահսկողություն:

2. **Լսեցին.** Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ Քոլեջի ուսանողների շրջանում անցկացված առցանց հարցումների արդյունքների վերաբերյալ Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը:

Լ.Հարությունյանը իր ելույթում անդրադարձավ ս/թ մարտի 29-ից ապրիլի 12-ը տնօրենի հանձնարարությամբ ուսումնական մասի և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների շրջանում կազմակերպված հարցաթերթիկային առցանց հարցումների արդյունքներին: Ընդհանուր առմամբ հարցումներին մասնակցել էին 146 ուսանողներից՝ 105-ը: Հարցման արդյունքների վերլուծությունը և արված առաջարկությունները ներկայացվեց թղտային տարբերակով (հարցումների վերլուծությունը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ամբիոնի վարիչներ Ա.Մելքոնյանը, Ա.Գրիգորյանը, դասախոս Ն.Հայրապետյանը և ուսանող Ա.Գալստյանը, իրենց ելույթներում ողջունեցին նման նախաձեռնությունը և առաջարկեցին նմա հարցումներ կազմակերպել պարբերաբար, քանի որ ուսանողների կարծիքների վերլուծության արդյունքում կարելի է բացահայտել և վերանայել առկա խնդիրները, որի արդյունքում հնարավոր կլինի բարելավել ուսումնական գործընթացները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումներն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյանին մանկավարժական խորհրդի նիստի արձանագրության մասին զեկուցել տնօրինական խորհրդի մոտակա նիստում:
3. Հանձնարարել ուսանողական խորհրդին ուսումնական մասի հետ համատեղ հաջորդ ուստարվա ընթացքում մշակել և անցկացնել հարցումներ դասախոսների և դասընթացների արդյունավետության գնահատման վերաբերյալ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

Ք.Երևան **19.05.2020թ.**

2020թ. Մայիսի 19-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի արտահերթ առցանց ընդլայնված նիստը տնօրեն՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչներիը, հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը, հրավիրված՝ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանը և ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը.

1. ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի վիճակի մասին:

   (Զեկուցող՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. Պետական ամփոփիչ ստուգման աշխատանքների մասին:

   (Զեկուցող՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. Ընդունելության աշխատանքների նախապատրաստման ընթացքի մասին:

   (Զեկուցող՝ Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ն.Սահակյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում հակիրճ ներկայացրեց, քոլեջում ուսումնական գործընթացի իրավիճակի մասին տեղեկատվություն, փաստելով, որ որևէ խնդիրներ և խոչընդոտներ չեն արձանագրվել: Արտակարգ իրավիճակի պայմաններում Քոլեջի ողջ անձնակազմը աշխատանքները

հիմնականում կազմակերպել են տանից: Ամփոփելով ելույթը Ն.Եգորյանը նշեց, որ անձամբ պարբերաբար ամբիոնի վարիչների հետ պահպանվել է կապը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումներն ընդունել ի գիտություն:
2. Արձանագրել, որ ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացը ընթանում է պատշաճ մակարդակով:

2. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա պետական ափոփիչ ստուգման աշխատանքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը իր ելույթում տեղեկացրեց, որ Հայաստանում հայտարարված արտակարգ դրության պայմաններում պետական ամփոփիչ ստուգումները կազմակերպվելու են հեռավար: Հավելեց, որ մասնագիտական ամբիոնների հետ քննարկվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18.05.2020թ. №08-Ն հրամանով հաստատված «ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2020-2021 ուստարվա առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելության և 2019-2020 թվականի շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման» կարգը: Բոլոր աշխատանքները ըստ քայլերի քննարկվում են և կտրվեն համապատասխան երաշխավորում մասնագետների կողմից:

Համաձայն կարգի 11-րդ կետի ժամանակին ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել պետական որակավորող հանձնաժողովի նախագահների թեկնածուների ցանկը: Կարգի 12-րդ կետի համաձայն մինչև մայիսի 25-ը պետք է նշանակվեն ուսանողների փոխադրման և ավարտական ստուգարքները: Գործընթացը կարգավորվում է սույն կարգի՝ 13-24-րդ կետերով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- ՈՒսումնական մասի վարիչը իր ելույթում հավելեց, որ ուսանողներին համաձայն գործող կարգի, ժամանակին տրամադրվել են անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն:
- Խորհրդի նախագահ Ի.Վարդանյանն առաջարկեց հունիսին Տնօրինական խորհրդի կողմից հրավիրող արտահերթ նիստում ամփոփել իրականացված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ուսումնական մասի կողմից իրականացված 2019-2020 ուստարվա պետական ամփոփիչ ստուգման նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:

2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին պատրաստել համապատասխան հրամանները և ներկայացնել տնօրենին:

3. **Լսեցին՝** Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանի ելույթը 2020-2021 ուստարվա ընդունելության աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ն.Սահակյանը իր ելույթում ևս անդրադարձավ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18.05.2020թ. №08-Ն հրամանով հաստատված «ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2020-2021 ուստարվա առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելության և 2019-2020 թվականի շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման» կարգին: Նշեց նաև, որ կապված համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում այս տարի որոշ դժվարություններ են առաջացել 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման նպատակով իրականացվող աշխատանքներում: Շնորհակալություն հայտնեց դասախոսներին, նախաձեռնության համար, նրանք Քոլեջի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ փոքրիկ գովազդներ են պատրաստել և տեղադրել Facebook սոցիալական ցանցրի իրենց անձնական էջերում: Նույն աշխատանքները կատարվում է նաև ուսումնական մասի հետ համատեղ կարիերայի և պրակտիկայի ղեկավարի կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2020-2021 ուստարվա ընդունելության նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան